

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

23 փետրվարի 2022 թ.
ք. Երևան

N 10-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ,
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 44-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 22-ի N 138-Ն որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Սահմանել, որ.

1) 2022 թվականի մարտի 27-ի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի և քարտուղարի պաշտոնները Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցության, կուսակցությունների դաշինքների միջև բաշխվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 22-ի N 138-Ն որոշմամբ հաստատված «Տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոնների ըստ ընտրական տեղամասերի բաշխման կարգի» 5-րդ կետով սահմանված կարգով,

2) ընտրությունների տեղամասային ընտրական հանձնաժողովներում հանձնաժողովի նախագահի և քարտուղարի պաշտոններն Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցության, կուսակցությունների դաշինքների միջև «Ընտրություններ» ավտոմատացված համակարգի միջոցով բաշխվել են հետևյալ համամասնությամբ՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն՝ 18-ական,

«Հայաստան» կուսակցությունների դաշինք՝ 8-ական,

«Պատիվ ունեմ» կուսակցությունների դաշինք՝ 2-ական:

2. Ընտրությունների տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոններն ըստ ընտրական տեղամասերի «Ընտրություններ» ավտոմատացված համակարգի միջոցով Ազգային ժողովում

խմբակցություն ունեցող կուսակցության, կուսակցությունների դաշինքների միջև համապատասխանաբար բաշխումը հաստատել՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածով սահմանված տեղամասային ընտրական հանձնաժողովներում անդամներ նշանակելու մասին հայտերը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են 2022 թվականի փետրվարի 25-ից մինչև մարտի 3-ը՝ մինչև ժամը 18.00-ն:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ.Մուկուչյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2022թ. փետրվարի 23-ի թիվ 10-Ա որոշման

ՏԸՀ	տեղ.	համայնքը	բնակավայր	նախագահ	քարտուղար
13	13/1	Վեդի	Վեդի քաղաք	ՔՊԿ	ՀԱՅԱՍՏԱՆ
13	13/2	Վեդի	Վեդի քաղաք	ՔՊԿ	ՔՊԿ
13	13/3	Վեդի	Վեդի քաղաք	ՀԱՅԱՍՏԱՆ	ՔՊԿ
13	13/4	Վեդի	Վեդի քաղաք	ՀԱՅԱՍՏԱՆ	ՔՊԿ
13	13/5	Վեդի	Վեդի քաղաք	ՔՊԿ	ՀԱՅԱՍՏԱՆ
13	13/6	Վեդի	Գոռավան գյուղ	ՔՊԿ	ՀԱՅԱՍՏԱՆ
13	13/7	Վեդի	Վանաշեն գյուղ	ՔՊԿ	ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ
13	13/8	Վեդի	Նոր ուղի գյուղ	ՔՊԿ	ՔՊԿ
13	13/9	Վեդի	Սիսավան գյուղ	ՔՊԿ	ՔՊԿ
13	13/10	Վեդի	Արալեզ	ՔՊԿ	ՔՊԿ
13	13/11	Վեդի	Ոսկետափ գյուղ	ՔՊԿ	ՀԱՅԱՍՏԱՆ
13	13/12	Վեդի	Ոսկետափ գյուղ	ՔՊԿ	ՔՊԿ
13	13/13	Վեդի	Նոր կյանք գյուղ	ՔՊԿ	ՔՊԿ
13	13/14	Վեդի	Գինեվետ	ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ	ՔՊԿ
13	13/15	Վեդի	Տափերական գյուղ	ՀԱՅԱՍՏԱՆ	ՔՊԿ
13	13/16	Վեդի	Տափերական գյուղ	ՀԱՅԱՍՏԱՆ	ՔՊԿ
13	13/17	Վեդի	Փոքր Վեդի գյուղ	ՔՊԿ	ՔՊԿ
13	13/18	Վեդի	Փոքր Վեդի գյուղ	ՔՊԿ	ՀԱՅԱՍՏԱՆ
13	13/19	Վեդի	Լուսառատ գյուղ	ՔՊԿ	ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ
13	13/20	Վեդի	Եղեգնավան գյուղ	ՔՊԿ	ՀԱՅԱՍՏԱՆ
13	13/21	Վեդի	Այգավան	ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ	ՔՊԿ
13	13/22	Վեդի	Այգավան	ՔՊԿ	ՀԱՅԱՍՏԱՆ
13	13/23	Վեդի	Դաշտաքար գյուղ	ՀԱՅԱՍՏԱՆ	ՔՊԿ
13	13/24	Վեդի	Ուրցաձոր գյուղ	ՔՊԿ	ՀԱՅԱՍՏԱՆ
13	13/25	Վեդի	Ուրցաձոր գյուղ	ՀԱՅԱՍՏԱՆ	ՔՊԿ
13	13/26	Վեդի	Շաղափ գյուղ	ՀԱՅԱՍՏԱՆ	ՔՊԿ
13	13/27	Վեդի	Լանջանիստ գյուղ	ՀԱՅԱՍՏԱՆ	ՔՊԿ
13	13/28	Վեդի	Լուսաշող գյուղ	ՔՊԿ	ՔՊԿ